ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՊԱՇԸՍՏԱՆԱՅ
ԳՆԱԼՈՅ ԵՒ ԳԱԼՈՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
Ի ԹՈՒՒՆ ՔՍԻ. 1678

1 Ես, Քրիստոսի նուաստ ծառայ Յոհան-
նէս վարդապետ և արքեպիսկոպոս Շամիրա-
մակերտու, կամեցայ գնալ ի Հապաշստան,
4 ի թուին Հայոց ՌՃԻԷ Սեպտեմբերի ԺԷ։
Ելեալ ի Մարդ 8 օր մեծ գետովն գնացաք
Գիրեայ։ Գիրեու նոյն գետովն 4 օր գնացաք
Ղինայ։ Այս գետոյս Բ կողմն այլ շինու-
8 թիւն է. Ղինու 8 օր գնայաք Ղուրսէր, որ
է Հնդկաց ծովու էսկալէն։ Այս 8 օրեայ
ճանապարհս չոլ է. ոչ ջուր կայ և ոչ բոյս,
այլ միայն կարմիր աւազ։ Ղուրսէրու ղայե-
12 խով 30 օրն հասաք Աօվաֆի, որ է սընոռ
Բաղդէն արտրի թագաւորին։ Եւ այս 30 ա-
ւուր ճանապարհի, կերպ կերպ մարդիկ գոն
որ ոչ վարել ունին և ոչ ցանել, այլ միայն
16 ղէռուկ և ամենայն աղգ գազան և եռղի տեղ
մարդոյ միս ուտեն։ Եւ մարդիք երկրին խիստ
կարճ են և հաստ։ Եւ ի գնալն անցաք մար-
գարտի ադայովն և զմրուխտի սարովն, Սովա-
20 ֆինու 20 օր ծովով գնացաք ի Մուսովա,
որ է մին կողմն Յեմանն, և մին կողմն
Հապաշստան. և ինքն կղզի է ի մէջ ծովուն,